ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

**No** 2479-Ա/Հ «21» հոկտեմբերի **2025 թ.**

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ (ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՖԻԶԻԿԱ, ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ /«ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»/, ՔԻՄԻԱ, ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՅՐԵՆԻ /ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ/, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆԳԼԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ /«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»/), ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N280-Ն հրամանի հավելվածի 5-րդ գլխի 22-րդ կետի 3–րդ ենթակետի և 15–րդ ենթակետի ա) պարբերությունը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել՝

1) 2025-2026 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հանրապետական առարկայական օլիմպիադաների (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աստղագիտություն, Կենսաբանություն, Ինֆորմատիկա /«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/, Քիմիա, Աշխարհագրություն, Մայրենի /ընթերցանություն/, Հայոց լեզու, Հայ գրականություն, Պատմություն, Անգլերեն, Գերմաներեն, Ռուսաց լեզու, Ֆրանսերեն, Նախնական զինվորական պատրաստություն /«Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն»/) կազմակերպման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /վարչության պետ՝ Թ.Սարգսյան/:

3. Հրամանի կատարման իրականացումը վերապահել նախարարի տեղակալ Ա.Սվաջյանին:

10/21/2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՆԱԽԱՐԱՐ** Signed by ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**